



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, Էլ. փոստ kotayk@mta.gov.am

15.05.2014 N _____

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Կուրսայքի մարզի հարգարժան քնակիչներ

Ջերմ բարեմաղթանքներով շնորհավորում եմ Ընտանիքի միջազգային օրվա առիթով և մաղթում, որ մեր ընտանիքներում մշտապես թևածեն բարձր տրամադրությունն ու ջերմ մթնոլորտը:

Տոնական շնորհավորանքներին ցանկանում եմ հավելել նաև հայկական ընտանիքի առանձնակի դերն ու նշանակությունը մեր ազգի պահպանման և զարգացման պատմական գործընթացներում:

Հարկ է ընդգծել նաև, որ հայ ընտանիքների ամրությունն ու անսասանությունը բոլոր ժամանակներում նպաստել են մեր համազգային բազում հաղթանակների կերտմանը:

Ընտանիքը պետության հիմքն է և սերը դեպի մեր ընտանիքները նշանակում է սեր դեպի հայրենիք, սեր դեպի միասնականություն և սեր դեպի խաղաղություն:

Դարձյալ շնորհավորում եմ և մաղթում, որ բոլորիս ընտանիքներում մշտապես իրենց հաստատուն ներկայությունն ունենան առողջությունն ու կատարյալ ընտանեկան երջանկությունը:

Հարգանքներով

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ